

ԱՌԱԿՆԵՐ



ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ
(1875-1957)

ԿՅԱՆՔԻՑ ԹԱՆԿ ԲԱՆԸ

Վայրի աղավնին՝ կուծքը վիրավոր,
Ընկել էր մենակ աղբյուրի եզրին,
Ծորում էր շիթ-շիթ արյունը բոսոր,
Մեռնում էր՝ աչքը ջրի երագին:

Քնքուշ պարիկը տեսավ դալկահար
Մեռնող աղավնուն և խոսեց այսպես.
– Տո՛ւր ինձ այն, ինչ որ թանկ է քեզ համար,
Էն թանկագինը, կյանք տամ իսկույն քեզ:

Մեռնող աղավնին խորհում էր ինքնին.
«Էն թանկագինը կյանքն է անպատճառ.
Ա՛խ, ծաղրում է ինձ աղբյուրի ոգին»:
– Էհ, լավ, թող լինի, տո՛ւր և նորից ան:

Պարիկը ցողեր սրսկեց վերքին,
Աղավնին բացեց աչքերը ոսկի,
Ու թևին տալով ծափեց խնդագին.
– Ե՛րբ կուզես կյանքս, նագելի՛ ոգի:

- Թևերդ կուզեմ, կյանքդ քեզ լինի:
 - Թևերս...ինչպե՞ս, օհ, երբեք, երբեք.
- Առանց թռիչքի կյանքը գին չունի.
 Կյանքս առ,-թռչունն ասաց սրտաբեկ:
- Թռի՛ր, սիրելի՛ս, ազատ ու վայրի,
 - Թռի՛ր ու ասա՛ ստրուկ աշխարհին,
 - Թե՛ ինչն է թանկը կյանքից ավելի...,-
- Ասաց ջրերի լուսեղեն ոգին:



Բառային աշխատանք

1. Գնորս գրիր **ու** ձայնավորի հնչյունափոխությանը վերաբերող երկու բառ: Բացատրի՛ր հնչյունի փոփոխությունը:
2. Գնորս գրիր **ի** ձայնավորի հնչյունափոխությանը վերաբերող բառեր: Բացատրի՛ր հնչյունի փոփոխությունը:
3. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝ *կուր_ք, աղ_յուր, ո_ի, մե_նել, եր_եք*:
4. Գտի՛ր *նուրբ, մրածել, սկ, արժեք* բառերի հոմանիշները:
5. *Աչք, թռիչք, վիրավոր* բառերի արմատներով բառեր կազմիր:
6. Խմբավորի՛ր բառերը՝ ըստ հնչյունափոխ և անհնչյունափոխ արմատների՝ *վիրավոր, դալկահար, թանկագին, ծաղրանկար, սևաչ, թևար, խնդագին, թռիչք, գնացուցակ, սրտաբեկ, ինքնաթիռ, ջրկիր, ոգեղեն*:

Հնչյունափոխ արմատ	Անհնչյունափոխ արմատ



Տեքստային աշխատանք

1. Ի՞նչ զգացիր առակը կարդալիս:
2. Քո բառերով փոխադրիր առակը:
3. Ցույց տուր երկխոսությունները և նշիր նրանց դերը առակում:
4. Բացատրիր առակի բարոյախրատական իմաստը:
5. Ներկայացրո՛ւ առակի գլխավոր միտքն արտահայտող նախադասությունը:
6. Մեկնաբանիր նախավերջին տան մեջ աղավնու խոսքերի իմաստը:
7. Գտիր յուրաքանչյուր քառատողի բանալի բառը և վերնագրի՛ր բովանդակությանը համապատասխան: Հիմնավորի՛ր ընտրությունդ:
8. Գտիր աղավնու մասին նոր առակներ կամ ի՛նքդ հորինի՛ր առակ:
9. «Ի՞նչ է, ով է» հանրագիտարանից աղավնու մասին հաղորդո՛ւմ պատրաստի՛ր:



ԵՐԿՆՆՅՈՒՆՆԵՐ

Ինչպես գիտենք, հայերենում **յ** բաղաձայնն ավելի թույլ արգելքով է արտասանվում, քան մյուս բաղաձայնները: Մյուսներից տարբերելու համար **յ** հնչյունը կոչում ենք կիսաձայն:

Կիսաձայն յ հնչյունի և որևէ ձայնավորի կապակցությունը կոչվում է երկհնչյուն: Օրինակ՝ **մայր**, **լույս**, **մատյան** բառերի մեջ **այ**, **ույ**, **յա** կապակցությունները երկհնչյուններ են:

Հայերենն ունի հետևյալ երկհնչյունները՝ **այ**-հայր, քարայր, **յա**-Արաքսյա, շաբաթօրյակ, **եյ** (արտասանվում է էյ)-թեյ, Ջեյթուն, **յե**-երագ, եղնիկ, Միքայել, **յի**-ամառային, գայի, **ոյ** (արտասանվում է օյ)-Նոյ, գոյ, **յո**-յոթանասուն, արդյոք, **ույ**-գույն, **յու**-արյուն, մյուս:

Յ ՉԱՅՆԱԿԱՊ

Երկու ձայնավորների միջև արտասանվող և գրվող յ հնչյունը կոչվում է ձայնակապ, ինչպես՝ կայարան, Գայանե, Կարոյի, է(յ)ակ, թույտ(յ)ի: **Յ** ձայնակապը գրվում է միայն **ա** և **ո** ձայնավորներից հետո:

Երբ **յ** ձանակապն ընկնում է երկու ձայնավորների միջև, այն երկհնչյուն է կազմում իրեն հաջորդող ձայնավորի հետ: Այսպես, **հարավային** բառում ձայնակապը **ա** և **ի** ձայնավորների միջև է: Երկհնչյունը ոչ թե **այ** կապակցությունն է, այլ **յի** կապակցությունը: Բառը վանկատելիս կամ տողադարձելիս երկհնչյուն կազմող **յ** կիսաձայնը և ձայնավորն անպայման պետք է գտնվեն միևնույն վանկում, օրինակ՝ հա-**յե**-լի:

Սա երկհնչյունին բնորոշ հատկանիշ է:

